

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

1994 Յունիս 4ին եւ 5ին, Շաբաթ եւ Կիրակի երեկոներում, Սրբոց Յակոբեանց Վանքի երկու կրթական հաստատութեանց Ամավերջի հանդեսները տեղի ունեցան, առաջինը՝ Ժառանգաւորաց Վարժարանի համդիսարահին մէջ, երկրորդը՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ, մախազահութեամբ Ամնմ. Սրբազան Պատրիարք Հօր, եւ մերկայութեամբ Միաբան Հայրերու, ուսուցիչներու, ծնողներու եւ համդիսատես ժողովուրդի:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի կարմիր գոգնոցաւոր փոքրիկները կատարեցին իրենց պարի, երգի եւ արտասանութեան բաժինները, զուարեացնելով իրենց ծնողքը եւ մերկաները, Մայիս 29, Կիրակի յետ միջօրէին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ:

Նախակրթարանի եւ երկրորդական Վարժարանի ուսանողները եւ Շրջանաւարտ դասարանը, երգերով, արտասանութեամբ եւ Հայ Մանրանկարչութեան մասին առեմախօսութեամբ, ճշիւ յայտագիր մը մերկայացուցին, եւ ստացան իրենց մրցանակները եւ Շրջանաւարտից վկայականները, ըստ վարժարանի տեսուչ՝ Գեր. Տ. Կիրեղ Նպս. Գաքիկեանի տեղեկատուութեան:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ

Ընծայարանի աշակերտները համդէս եկան դաշնամուրի դասական եւ արդի հեղինակներէն կատարումով, մեներգի մուգակցութեամբ, խմբերգներով, արտասանութեամբ, ուղերձով եւ բացման խօսքով, երախտագիտութիւն յայտնելով իրենց տրուած դաստիարակութեան համար: Զ. դասարանէն երկու աշակերտներ ստացան իրենց Շրջանաւարտի վկայականը: Ընծայարան Գ. դասարանի սարկաւազներ տարի մը եւս պիտի շարունակեն իրենց ուսումը, եւ իւրաքանչիւրը իր ընտրած նիւթի մասին իր աւարտագրող պիտի ամրոջացնէ եւ մերկայացնէ յաջորդ տարեշրջանի վերջաւորութեան:

Ամնմ. Սրբազան Պատրիարք Հայրը, Միաբանութեան անդամներուն հետ, մասնակցեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի շրջանաւարտներու ի պատիւ տրուած ճաշկերոյթներուն, Հ. Ե. Միութեան եւ Հ. Օ. Միութեան վարչութեանց կարգադրութեամբ, իրենց ակումբներու սրահներուն մէջ, երգի, արտասանութեան, մուգի եւ խօսքի հանելի յայտագիրով, 16 եւ 23 Յունիսին: Շրջանաւարտները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին իրենց ծնողաց, ուսուցիչներուն եւ վանական իշխանութեան, իրենց ստացած հայեցի դաստիարակութեան համար:

ԶԱՏԿԱԿԱՆ ԾՆՈՐՀԱԿՈՐԱՆՔ

Պատրիարք Սրբազան Հայրը Զատնուան տօնին առիթով իր բարեմաղթութիւնները եւ շնորհաւորանքի գիրերը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետներուն, որոնցմէ ստացած է բարի մաղթանքներու գիրեր:--

– Ամնմայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն, Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազանագոյն Կաթողիկոսէն.

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն

– Հոռովմէական Կաթողիկ եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետ, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապէն.

– Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամնմ. Տ. Տ. Ալեքսէյ Բ. Սրբազան Պատրիարքէն

– Թուրքիոյ Հայոց Ամնմ. Տ. Գարեգին Պատրիարք Գազանճեանէն

– Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Ռոպերթօ Կիւլպէնկեանէն, ի Լիզպոն

– Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեան ղեկավարներէն